

## ԳՈՐԾԱԴԻՐ

### ԻՐԱՎԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԱՅՍ ՏԱՐԻ ԿՈՒՆԵՆԱՆՔ ԵՐԿՆԻՇ ԹՎՈՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ, ԻՍԿ 2022-ԻՆ ՇՆԱ-Ի ԾԱՎԱԼԸ ԿԶԱՍՅՎԻ 65 ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻԻ»

Նոյեմբերի 8-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը:



Նիստի մեկնարկին Իրակլի Դարիբաշվիլին հանրագումարեց ընթացիկ տարվա անցած ժամանակահատվածում տնտեսական գործունեության ադյունքները, մանրամասնեց համավարակի պայմաններում էկոնոմիկայի վերականգնման հարցերը, առաջիկա ծրագրերին, կառավարության կողմից մշակված՝ 2022 թվականի պետական բյուջեի առաջնահերթությունները:

- Մենք խորհրդարանին ենք ներկայացրել լրամշակված բյուջեի վերանայված տարբերակ, թեև Նոյեմբերին ինտենսիվ կաշխատեցրեք նախարարությունների, գերատեսչությունների հետ եւ ամսվա վերջում վերջնա-

կան տարբերակը կներկայացնենք խորհրդարանին,- հայտարարեց վարչապետը:  
(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## COVID - 19

### ՊԱՇՏՈՆԱՊԵՏ ԸՆԴՈՒՆՎԵՅ ԿՈՎԻԴ ԱՆՁՆԱԳԻՐԸ. ԻՆՉՈՒ Է ԴԱ ԱՐՎՈՒՄ, ԵՎ ՈՐՏԵՂ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼՈՒ ԱՅԴ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ

ԻՐԱՎԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՊԱՏՎԱՍՏՈՒՄԸ ՊԱՏԱԴԻՐ ԶԻ ԴԱՌՆԱ»



Նոյեմբերի 8-ին կորոնավիրուսի դեմ պայքարի միջգերատեսչական համակարգող խորհրդի արտակարգ նիստում ընդունվեց որոշում, ըստ որի, պաշտոնապես ներդրվեց «Կանաչ անձնագիրը»:

տիվացումն է: Ակնհայտ է, որ «Կանաչ անձնագիր» կիրարկմամբ, պատվաստումն անցած քաղաքացիների համար կսահմանի որոշակի արտոնություն, իսկ չպատվաստված քաղաքացիները կունենան որոշակի սահմանափակումներ, ինչը վերջին հաշվով կնպաստի նրանց կողմից պատվաստվելու որոշման ընդունմանը:

Ինչպես պարզաբանեցին համակարգող խորհրդում, «Կանաչ անձնագրերի» ներդրման գլխավոր նպատակը պատվաստման գործընթացի ակ-

(Շարունակությունը՝ 6-րդ էջում)

### «ՎՐԱՍՏԱՆԸ» 100 ՏԱՐԵԿԱՆ Է

«ՎՐԱՍՏԱՆԸ»՝ ՆՇԱՆԱԿԱԼԻ ԵՎ ՀՈՒՍԱԼԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՐՔՈՒՐ



Լրացավ մեր երկրի հայալեզու «Վրաստան» թերթի 100-ամյակը: Կրթության եւ գիտության նախարարության ՀԻԻԱ Ջուրաբ ժվանիայի անվան պետական վարչարարական դպրոցն ի սրտե շնորհավորում է խմբագրության բոլոր աշխատակիցներին եւ թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրյանին թերթի հոբելյանի առիթով:

2005 թվականից մեր դպրոցի գործունեության գլխավոր ուղղությունն ուսումնական եւ գործնական ծրագրերի իրականացմամբ, երկրում պետական ու տեղական ինքնակառավարման ոլորտում առկա կադրային պակասի հաղթահարումն է եւ բարձրալեռ ու ազգային փոքրամասնությանը

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԱՅՍ ՀԱՐՅՈՒՐԱՅԱԿԸ ԲՈՒՈՒՄ ՀՈՒՐԵԼՅԱՆ Է

Կարելի է վստահությամբ ասել, որ սիրելի թերթի 100-ամյակը այն քաղաքացիների համար, ովքեր են ավելի շատ իմանան Վրաստանում ապրող յուրաքանչյուր հայազգի քաղաքացու հոբելյանն է:



Իհարկե, երկար կարելի է խոսել անցած 100 տարիներին «Վրաստանի» անցած ճանապարհի, վիրահայերիս համար թերթի նշանակության եւ դերի մասին: Եվ բոլոր խոսքերը փաստարկված ու հիմնավորված կլինեն: Թեև այսօր, թերթի հոբելյանի կապակցությամբ կցանկայի խոսել հոգեւոր այն կապի մասին, որը մեզանից յուրաքանչյուրին կապում է այս հնամենի մատենագրի հետ:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

## ՀԱՅԱՍՏԱՆ

### ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝ ԿԱՐԱՆՏԻՆԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳՎՈՒՄ Է

Նոյեմբերի 11-ին Հայաստանի կառավարությունը չզեկուցվող հարցերի փաթեթով ընդունել է որոշում, որով նախատեսվում է երկարաձգել կարանտինի ընթացքում կիրառվող կանխարգելիչ եւ հակահամաճարակային միջոցառումները մինչև 2022 թվականի հունիսի 20-ը:

Ըստ այդմ, Հայաստանի քաղաքացիություն չունեցող անձանց համար օդանավակայանում կան ցամաքային սահմանի անցակետերում տեղակայված մուշառման կետերում ՊՇՈ հետազոտության համար մուշառման հնարավորությունը հանվում է:



(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

## ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

### ԻՐԱՎԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՆՈՐԸՆՏԻՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ՀԵՏ

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՆԱԿՅԵՅԻՆ ՆԱԿ ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ ՈՒ ՄԵԼՈՆ ՄԱՎԱՐՅԱՆԸ

Նոյեմբերի 10-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին կառավարության գրասենյակում հանդիպում ունեցավ հոկտեմբերին անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների նորընտիր քաղաքապետերի հետ:



Վարչապետի եւ նորընտիր քաղաքապետերի հետ հանդիպմանը ներկա էր համապատասխան տարածաշրջանի պետական լիազոր նահանգապետը:

Այդ օրը կայացավ Վրաստանի վարչապետի հանդիպումը Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի բոլոր վեց մունիցիպալիտետների հետ:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

## ՀԱՐՅԱԶՐՈՒՅՑ

### ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆ. «ՊԵՏՔ Է ԱՇԽԱՏԵՆՔ ՆՈՐ ԵՌԱՆԴՈՎ, ՈՐՊԵՄՉԻ ԱՄԵՆ ՎԱԳՎԱ ՕՐԸ ՏԱՐԲԵՐՎԻ ՆԱԽՈՐԴԻՅ»

Նինոծմինդայի տարածքային ընտրական հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության համաձայն, վերընտրված քաղաքապետ ԱՆԻ ՄՈՍՈՅԱՆԸ պաշտոնապես ստանձնեց քաղաքապետի պարտականությունները:

«Վրաստան» եւ «Արշալույս» թերթերի խմբագրություն, Նինոծմինդայի քաղաքապետի հետ զրուցել է Լուսինե Վարդանյանը:

- Տիկին Մոսոյան, ընդունեք մեր ջերմ շնորհավորանքները տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրություններում եւս մեկ անգամ համոզիչ հաղթանակ տանելու առիթով, թող Ձեր հետագա գործունեությունն է՛լ ավելի նպաստավոր դառնա մեր երկրի եւ բնակչության համար:

ՏԻՄ ընտրություններում «Վրացական երազանքի» առաջադ-

րած երեք եռանդուն կանայք ստանձնեցին քաղաքապետի պաշտոններ. Նինո Լացաբիձեն՝ Ռուսթավիում, Մանանա Նարիմանիձեն՝ Դուլեթիում եւ Դուք՝ Նինոծմինդայում: Գիտե՞ք, որ Դուք առաջին կինն եք ողջ Կովկասում, ով երկրորդ անգամ է ընտրվել քաղաքապետի պաշտոնում: Ըստ Ձեզ, երկրում զենդերային հավասարության հա՞րցն է լուծվում:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԳՈՐԾԱՐԻ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԱՅՍ ՏԱՐԻ ԿՈՒՆԵՆԱՆԲ ԵՐԿՆԻՆ ԹՎՈՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՋ, ԻՍԿ 2022-ԻՆ ՀՆԱ-Ի ԾԱՎԱԼԸ ԿԶԱՍՅՎԻ 65 ՄԻԼԻԱՐԴ ԼԱՐԻԻ»

(Սկզբը՝ 1-ին էջում)

Անդրադառնալով ընթացիկ տարվա տնտեսական ցուցանիշներին, կառավարության ղեկավարը նշեց, որ երկիրն ունի շատ ուժեղ տնտեսական աճ:


- Ինքնաձայն տնտեսական աճը կազմել է 11,3 տոկոս, վերանայվել է իրական տնտեսական աճի կանխատեսումը, եւ ենթադրում ենք, որ այս տարի կունենանք երկնիշ թվով տնտեսական աճ: Տնտեսական աճի կանխատեսման ցուցանիշով պայմանավորված՝ աճել է նաեւ անվանական ՀՆԱ-ի կանխատեսումը եւ, բյուջեի առաջին տարբերակով կանխատեսված 58,4 մլրդ լարիի փոխարեն, վերանայված տարբերակում կանխատեսվել է

58,7 մլրդ լարի: 2022 թվականին իրական տնտեսական աճի կանխատեսումը 6 տոկոս է: Մակրոտնտեսական ցուցանիշների առումով 2022 թվականի անվանական համախառն ներքին արտադրանքը կազմում է 65 միլիարդ լարի, ինչը նշանակում է, որ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կգերազանցի 5 500 ԱՄՆ դոլարը,- նշեց վարչապետը:

Կառավարության նիստում Իրակլի Ղարիբաշվիլին, խոսելով կորոնավիրուսի համավարակի պայմաններում երկրում ստեղծված իրավիճակի մասին, նշեց, որ կայացած ընտրությունները կրկին անգամ հաստատեցին կառավարող թիմի նկատմամբ երկրի բնակչության վստահության մակարդակը:

- Ուզում եմ եւս մեկ անգամ շնորհակալություն հայտնել մեր ժողովրդին, հասարակությանը հայտարարված վստահության համար եւ ասել, որ ամեն ինչ անելու ենք նրանց վստահությունն արդարացնելու համար: Սա շատ պատվաբեր աշխատանք է, բայց ավելի մեծ պատասխանատվություն, եւ մենք շատ լավ գիտակցում ենք այդ պատասխանատվությունը: Այսօրվանից պետք է կենտրոնանալ միայն գործի վրա: Նախարարներին հրապարակավ ուզում եմ ասել, որ այսօրվանից պետք է խոսել միայն գործի մասին, պետք է կենտրոնանալ միայն գործի եւ այն խոստումների, նախագծերի, նախաձեռնությունների վրա, որոնց մասին խոսել ենք նա-

խընտրական քարոզարշավի ժամանակ, այս առաջընթացի մասին պետք է խոսել 24-ժամյա ռեժիմով աշխատանքը պետք է սկսենք բացարձակ մոտիվացված, նորացված, կրկնապատկված էներգիայով: Մենք քաջ գիտակցում ենք, որ այսօր ժողովրդի, երկրի առջեւ ծառայած մարտահրավերներ եւ չափազանց շատ խնդիրներ կան: Սրանք աշխատատեղերի պակասը, աղքատությունը, գործազրկությունը, համավարակը, զբաղմունքներն են, ուստի մենք կորցնելու ժամանակ չունենք: Մենք պետք է կենտրոնանանք միայն գործի վրա եւ պետք է աշխատենք 24 ժամ մեր ժողովրդի ու երկրի համար,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:



ՄԱԿ

## ՊԱՏՎԱՍՏԱՆ ՄԻԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻ ՄՇԱԿՄԱՆ ԿՈՉ

Աշխարհին անհրաժեշտ է կորոնավիրուսի դեմ պատվաստման միջազգային պլան, որպեսզի 2022 թվականի առաջին կեսին երկիր մոլորակի վրա պատվաստված լինի բնակչության առնվազն 70 տոկոսը: Նոյեմբերի 11-ին այդ մասին հայտարարել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեսը:

Փարիզի խաղաղության համաժողովի մասնակիցներին հղած իր տեսաուղերձում նա նշեց, որ կորոնավիրուսն աշխարհում սաստկացրել է անհավասարությունը, իսկ այն փաստը, որ աշխարհում միլիարդավոր մարդիկ տակավին սպասում են կորոնավիրուսի դեմ իրենց առաջին պատվաստմանը, նա համարել է «բարոյական սխալ»:

## ԼԵՅԱՍԱՆ - ԲԵԼԱՌՈՒՄ ԶԻՆՎԱԾ ԲԱՆՄԱՆ ՎՏԱՆԳ ՍԱՐՏԱՆԱԳԾՈՒՄ

Լեհաստանի իշխանությունները մտավախություններ ունեն, որ Բելառուսի հետ սահմանին ստեղծված իրավիճակը, որտեղ նախօրեին մոտ 4000 փախստական փորձում էր հատել սահմանը եւ մտնել Լեհաստան, կվերաճի զինված բախման:

Ինչպես Լեհաստանի, այնպես էլ Եվրամիության պաշտոնյաները բելառուսա-լեհական սահմանին ստեղծված կոնֆլիկտային իրավիճակի համար մեղադրում են Բելառուսի իշխանություններին:

Նշենք, որ նոյեմբերի 8-ին Բելառուսի Պետական սահմանապահ կոմիտեն հաղորդել էր, որ մեծ թվով փախստականներ Արեւելքից եւ Աֆրիկայից շարժվում են դեպի Լեհաստանի հետ Բելառուսի սահման:

## ԱԳՆ. ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄ

# ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԱԼԲԱՆԴՈՎԸ՝ ԱՄԻԱՅԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՎԿԻԱՆՈՍՅԱՆ ՏԱՐԱԾԱՆԵՐԶԱՆԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՏՆՕՐԵՆ



Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Չալկալիանու՝ ընթացիկ տարվա նոյեմբերի 10-ի հրամանագրով, Ալեքսանդր Նալբանդովը նշանակվել է նախարարության Ասիայի եւ Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի դեպարտամենտի տնօրեն:

Հիշեցնենք՝ Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ալեքսանդր Նալբանդովը օրերս ավարտեց իր դիվանագիտական առաքելության ժամկետը Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում էր ունենում իբրև լիազոր դեսպան Ալեքսանդր Նալբանդովը օրերս ավարտեց իր դիվանագիտական առաքելության ժամկետը Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում:

բյուրում (համատեղության կարգով՝ Թուրքիայում, Լիբիայում) եւ վերադարձավ հայրենիք: Իսկ մինչ այդ, Թբիլիսիում ծնված ու մեծացած, 61-ամյա Ալեքսանդր Նալբանդովն իր աշխատանքային գործունեությունն սկսել էր Թբիլիսիում գործող Մարդու իրավունքների հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններում, մշտապես ակտիվ մասնակցու-

թյուն էր ունենում իբրև լիազոր դեսպան Ալեքսանդր Նալբանդովը օրերս ավարտեց իր դիվանագիտական առաքելության ժամկետը Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում:

«Վրաստան» թերթի խմբագրությունը ի սրտե շնորհավորում է Ալեքսանդր Նալբանդովին արտաքին գերատեսչության կարելուրագույն դեպարտամենտի տնօրեն նշանակվելու կապակցությամբ եւ մաղթում հաջողություններ նոր, պատասխանատու պաշտոնում:

## ԻՐԱԿԻՃԱԿ

# «ԵՐԱՋԱՆԵՐԻ» ՀԱՆՐԱՆԱԿԱԸՐԸ՝ Ի ՀԻՇԱՍԱԿ 14-ԱՄՅԱ ՎԱՐԵՄՈՒԹՅԱՆ ԻՐԱՂԱՐՁՈՒԹՅԱՆ

Ընթացիկ տարվա նոյեմբերի 7-ին «Վրացական երազանքի» կազմակերպմամբ անցկացվեց բազմահազարանոց հանրահավաք՝ ի հիշատակ 14-ամյա վաղեմության ողբերգական իրադարձության:

2007 թվականի նոյեմբերի 7-ին Ազգային շարժման վարչակազմը մեկ օրվա ընթացքում մի քանի անգամ ցրեց եւ արյան մեջ խեղդեց խաղաղ բողոքը, բռնությամբ ներխուժեց «Իմեդի» հեռուստաընկերություն: Ուժային կառույցների հատուկ ջոկատայինների հետ միասին, ոչ պաշտոնական խմբավորումները (զոնդերները) դաժան հաշվեհարդար տեսան խաղաղ ցուցարարների, հացադուլ հայտարարած քաղաքական գործիչների հետ, չխնայեցին լրագրողներին եւ ոչ էլ ժողովրդական պաշտպանին: Այս ցուցարարական պատժիչ գործո-

ղությանը, Սաակաշվիլին ցանկանում էր խեղդել ազգային շարժման դեմ համաժողովրդական բողոքը եւ բնակչության շրջանում վախ արմատավորել, որպեսզի ոչ ոք չհամարձակվեր արդարության համար փողոց դուրս գալ կամ բարձրաձայնել տարբերվող քաղաքական դիրքորոշում:

14 տարի անց, նոյեմբերի 7-ին Թբիլիսիում, խորհրդարանի շենքի դիմաց, անցկացվեց այդ իրադարձությանը նվիրված հանրահավաք,



որի մասնակից տասնյակ հազարավոր մարդիկ խստորեն դատապարտեցին Ազգային շարժման ինչպես այն օրերի, այնպես էլ՝ ներկայիս գործունեությունը՝ այն որակելով որպես երկրի ապակայունացման փորձ:

# ԳԻԱ ԳԱԶԵԶԻԼԱԶԵ. «ԱՐՅՈՒՆՈՏ ՎԱՐՉԱԿԱՄՄԻ ԱՎԱՐՏԻՅ 9 ՏԱՐԻ ԱՆՅ, ԸՆԴՊԻՍՈՒԹՅՈՒՆԸ ՃՆՇՈՒՄ Է ՄԱՐԴԿԱՆՅ»

Արյունոտ վարչակազմի ավարտից 9 տարի անց, նոյեմբերի 7-ի կազմակերպիչները նույն մեթոդներով, սակայն արդեն որպես ընդդիմություն, կրկին ծնշում են մարդկանց:

Այդ մասին հայտարարեց երգիչ եւ հեռուստահաղորդավար, «Աի իա» հասարակական շարժման հիմնադիր Գիա Գաչեչիլաձեն (Ուցնոբին):

Հիշեցնելով 14-ամյա վաղեմության իրադարձությունները՝ Գիա Գաչեչիլաձեն նշեց, որ Ազգայինների վարչակազմի արյունոտ հաշվեհարդարը երկրի բնակիչների դեմ, չսահմանափակվեց միայն նոյեմբերի 7-ով:

- Յավոք, տարիներ շարունակ Ազգայինների իշխանության գործառույթը քաղաքական հաշվեհարդարն էր, - ասաց Ուցնոբին եւ հավելեց, որ այսօր, 2021 թվականի արյունոտ վարչակազմի ավարտից 9 տարի անց, նույն մարդիկ (նոյեմբերի 7-ի կազմակերպիչները) նույն մեթոդներով, սակայն արդեն որպես ընդդիմություն, կրկին ծնշում են մարդկանց: Նրանց հրահրում է ռեանձի անգուսպ ցանկությունը, ապակայունացման եւ երկիրը խառնելու ճանապարհով, իշխանության վերադարձը:

Ալեքսայտ է, որ վրաց հասարակությունը դա թույլ չի տա: Բնակչությունն ընտրությունները արդյունքներով արդեն պատասխանել է նրանց չար նպատակներին, իսկ նոյեմբերի 7-ին մարդիկ հավաքվեցին այնտեղ, որտեղ 9 տարի առաջ սկսվեց հացադուլ հայտարարածների նկատմամբ բռնությունը (խորհրդարանի առջեւ, Ռուսթավելու պողոտայում), - հայտարարեց Գիա Գաչեչիլաձեն:



# ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի ԸՆԴՊԻՍՈՒԹՅԱՆ ՅՈՒՅՅՈՒՆԸ՝ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԻԽԵԻԼ ՍԱԿՎԱՆՎԻԼՈՒ



Նոյեմբերի 8-ին «Ազգային շարժումը», ընդդիմադիր առանձին կազմակերպությունների մասնակցությամբ, Թբիլիսիի Ազատության հրապարակում անցկացրեց հանրահավաք, որի մասնակիցներն իշխանությանը ներկայացրին Միխեիլ Սաակաշվիլուն բանտային հիվանդանոցից քաղաքային կլինիկա տեղափոխելու պահանջ:

Հանրահավաքն անցկացվեց նրանից հետո, երբ հայտնի դարձավ, որ Վրաստանի երրորդ նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն Ռուսթավիի թիվ 12 քրեակատարողական հաստատությունից տեղափոխել են Գլդանիի 18-րդ քրեակատարողական հիմնարկի բուժհաստատություն, որտեղ նա շարունակում է արդեն 40 եւ ավելի օր տեւող հացադուլը:

Նախկին նախագահի կողմնակիցների պնդմամբ, հացադուլի արդյունքում Միխեիլ Սաակաշվիլու առողջական վիճակը վատթարացել է, եւ նրանք պահանջում էին նախկին նախագահին տեղափոխել քաղաքային հիվանդանոց:

Ի պաշտպանություն այդ պահանջի, «Ազգային շարժումը» ցույցեր է կազմակերպում Թբիլիսիի տարբեր վայրերում (խորհրդարանի առջեւ, բանտային հիվանդանոցի մոտակայքում, նախարարությունների շենքերի մոտ): Հակաօրինական գործողությունների համար իրավապահները բերման են ենթարկել ցույցի 46 մասնակցի հանրահավաքներ անցկացնելու համար:

Էլը պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՎՐԱՍԱՊ


«ԴԵՂԵՐԻ ԳՆԵՐԸ ԲԱՐՁՐ ԵՆ, ԵՎ ՄԵՆՔ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆՔ ԺԱՄԱՆԱԿԻՆ ԱՐՉԱԳԱՆՔԵԼ»

Նոյեմբերի 12-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլու նախագահությամբ անցկացվեց տնտեսական խորհրդի նիստ, որտեղ քննարկվեց ղեկավարության շուկայի մոնիտորինգի վերաբերյալ միջանկյալ զեկույցը, որը վարչապետին էր ներկայացրել Արցախյան գործակալության նախագահ Իրակլի Լեքվինաձեն:

Ներկայացվելով զեկույցը, Իրակլի Դարիբաշվիլին հայտարարեց, որ ղեկերի գները շատ բարձր են, եւ տշխանությունը պարտավոր է ժամանակին արձագանքել: Վարչապետը համապատասխան գերատեսչությունների ղեկավարների հետ

քննարկեց այն քայլերը, որոնք պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում ձեռնարկվեն ղեկերի բարձր գների մարտահրավերը լուծելու համար: - Այս գործընթացը զարգացել է տարիներ շարունակ եւ պահանջում է մեր

կողմից պատշաճ միջամտություն: Փաստորեն, մենք պետք է դա անենք այնպես, ինչպես եվրոպական երկրներում է: Մենք ոչ մի նոր բան չենք սահմանում, այս հարցը պետք է կարգավորվի, քանի որ մեր բնակչությունը շատ մտահոգված է: Դեղերի գները շատ բարձր են, եւ մենք պարտավոր ենք ժամանակին արձագանքել: Ես ուզում եմ այս ձեռնարկով քննարկել եւ սկսել արձագանքել ու գործել,- ասաց վարչապետը:



ՆՈՅԵՄԵՐԻ 7-ԻՆ՝ ԵՐԵԿԼԵՈՐԱ


Նոյեմբերի 7-ին Վրաստանում նշեց Երեկելեոբան՝ վրաց Երեկելե երկրորդ թագավորի հիշատակի օրը:

Երկրի բնակչությանը շնորհավորելով Երեկելեոբայի առիթով՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին իր ֆեյսբուքյան էջում նշեց, որ երախտապարտ վրաց ժողովուրդը երբեք չի մոռանա վաստակաշատ թագավորի՝ Երեկելե II-ի մեծ գործերը հայրենիքի առաջ:

Իրակլի Դարիբաշվիլու խոսքով, Երեկելե II-ը փայլուն ռազմական ստրատեգ էր, անխոնջ մարտիկ, հայտնի քաղաքական գործիչ եւ իր դարաշրջանի մեծ բարեփոխիչը: Նրա անունը կապված է գիտելիքի եւ կրթության վրա հիմնված Վրաստանի միավորմանն ու արդիականացմանն ուղղված բարեփոխումներին, արդյունաբերությանը եւ մշակույթի զարգացմանը:

ՄԱՅՍՅԵԼ Ե ԳԵԼԱ ՉԱՐԿՎԻԱՆԻՆ

82 տարեկան հասկում վախճանվել է վրաց դիվանագետ, իրապարակախոս, գրող, մանկավարժ եւ հեռուստահաղորդավար Գելա Չարկվիանին:



Գելա Չարկվիանին աշխատանքային գործունեությունը սկսել է Վրաստանի հեռուստատեսությունում, որտեղ 1976-1994 թթ. վարել է հեղինակային հաղորդումը: 1984-1992 թթ. նա արտասահմանյան երկրների հետ բարեկամության ընկերության փոխնախագահն էր: Ակտիվ մասնակցություն է ցուցաբերել ԱՄՆ-ի Չորջիա Նահանգի եւ Վրաստանի կառավարությունների միջեւ սերտ կապերի հաստատման գործում: 1992-2003 թթ. Գելա Չարկվիանին երկրի նախագահ Էդուարդ Շեարղնաձեի՝ արտաքին քաղաքականության հարցերով խորհրդակցական էր: 2005թ. նա Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպանն էր Մեծ Բրիտանիայում ու Իռլանդիայում:

Գելա Չարկվիանին զբաղվել է նաեւ ստեղծագործական գործունեությամբ, եղել է ռազմամտության միջինատյուրների, իր հոր՝ 40-ական թվականներին Վրաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կանդիդ Չարկվիանուն նվիրված փաստա-վավերագրական գրքերի հեղինակը, վրացերեն թարգմանել է Շեքսպիրի «Լիր արքան»:

Արգասաբեր գործունեության համար Գելա Չարկվիանին պարգևատրվել է Պատվո շքանշանով, Պայծառափայլության նախագահական շքանշանով եւ Սուրբ Գիորգիի անվան հաղթանակի շքանշանով:

ՏԱՐԱԾԱՆԵՐԱՆ

ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՆՈՐԵՆՏԻՐ ՔԱՂԱՔԱԿԵՏԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պալիտեսների քաղաքապետերի եւ տարածաշրջանում պետական լիազոր Բեխլի Ամիրանաշվիլու հետ: Հանդիպմանը ներկա էին Ախալքալաքի քաղաքապետ Սելբոն Մակարյանը, Նինոծմինդայի քաղաքապետ Անի Մոսոյանը, Ախալցխի քաղաքապետ Իրակլի Լազարիշվիլին, Ասպինձայի քաղաքապետ Ռոստոմ Մազրաբելիձեն, Բորժոմի քաղաքապետ Օթար Արբուխիշվիլին, Ադիգենի քաղաքապետ Գոչա Քիմաձեն:

Վարչապետը քաղաքապետերին շնորհավորեց ընտրության կապակցությամբ եւ վստահեցրեց, որ կենտրոնական կառավարությունը հնարավորինս կաջակցի ծրագրված այն նախագծերի իրականացմանը, որոնք կազմում էին ինչպես «Վաղակալական երազանք» կուսակցության նախընտրական ծրագրի, այնպես էլ՝ առանձին վերցրած թեկնածուի նախընտրական ծրագրի բաղկացուցիչ մասը:

Վարչապետը տարածաշրջանի պետական լիազորին հանձնարարեց սերտորեն համագործակցել մունիցիպալիտետների քաղաքապետերի, տեղի բնակիչների հետ՝ ծրագրված նախագծերի իրականացման եւ բնակիչներին հուզող հարցերի շտապ կարգավորման գործում: Նշեց, որ նույն օրը Իրակլի Դարիբաշվիլին հանդիպում ունեցավ նաեւ Քվեմո Քարբլի պետական լիազոր Շոթա Ռեխվիաշվիլու, Ծալկայի քաղաքապետ Իլիա Սաբաձեի, Մառնեուլի քաղաքապետ Կենա Օմարովի, Թեթրիժարայի քաղաքապետ Գիորգի Ծիկլաուրու, Բուրխի քաղաքապետ Դավիթ Շերաթաշվիլու հետ:

Իրակլի Դարիբաշվիլին, նորընտիր քաղաքապետերի հետ հանդիպումների շրջանակներում, հանդիպում ունեցավ նաեւ ինքնակառավարման հինգ քաղաքների՝ Թբիլիսիի, Ռուսթավիի, Բաթումիի, Քութայսիի եւ Փոթիի քաղաքապետերի հետ:

ՈՒՋՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ ՈՒՋՄԱՆԱԿԵՐԸ՝ ՎՐԱՍԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՋՐԵՐՈՒՄ

ՄԻՋՈՍԱՍՏԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՐ ԻՐԱԿԼԻ ԴԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ

Վրաստանի տարածքային ջրեր մտան Ամերիկայի Միացյալ Նահանգների 6-րդ նավատորմի հրամանատարական USS Mount Whitney (LCC20) եւ USS Porter (DDG78) ռազմանավերը:

Ամերիկյան ծովայիններին Բաթումիի նավահանգստում դիմավորեցին Վրաստանի ներքին գործերի նախարարության սահմանային ոստիկանության ծովափնյա պաշտպանության ղեկավարները: Առաջին կարգի կապիտան Ռամազ Պապիձեն եւ Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության նախագահ Թոռնիկե Վիժվաձեն:

Նի վարչապետ Իրակլի Դարիբաշվիլին, արտաքին գործերի նախարար Դավիթ Ջալալյանին, Վրաստանում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Քելի Դեզնանը, պաշտոնական այլ անձինք:



Ամերիկյան ռազմանավերի այցը կրկին անգամ ընդգծում է ՆԱՏՕ-ի դաշնակից Վրաստանի նշանակությունը այլամասի համար, ինչպես նաեւ Սեւ ծովի ավազանի նշանակությունը ՆԱՏՕ-Վրաստան ռազմական համագործակցության եւ ԱՄՆ-Վրաստան ռազմավարական համագործակցության համար: Ինչպես նշվեց հանդիպմանը, այցը ծառայում է համագործակցության խորացմանը, տարածաշրջանի կայունացմանն ու անվտանգությանը:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԾԱՎԱԼԸ ԿԱՉՄՈՒՄ Ե ԵՐԿՐԻ ՀԱՄԱՆԱԾՆ ԵՐՔԻՆ ԱՐՏԱԳՐԱՆՔԻ ԿԵՄԻՑ ԱՎԵԼԻՆ

Վրաստանի Ազգային բանկի տվյալներով, Վրաստանի ընդհանուր արտաքին պարտքը, 2021 թվականի հունիսի 30-ի դրությամբ, կազմել է 20,6 միլիարդ ԱՄՆ դոլար կամ 65,2 միլիարդ լարի, ինչը վերջին չորս եռամսյակների ՉՆԱ-ի 123,3 տոկոսն է:

2021 թվականի երկրորդ եռամսյակում Վրաստանի ընդհանուր արտաքին պարտքն աճել է 11,6 մլն դոլարով: Պետական արտաքին պարտքը կազմել է 10,0 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը ՉՆԱ-ի 59,5 տոկոսն է: Դրանից կառավարական

հատվածի պարտքը՝ 7,8 միլիարդ դոլար է, Ազգային բանկի պարտավորությունները՝ 689,8 միլիոն, պետական պարտատոմսերն ու վարկերը, համապատասխանաբար՝ 518,2 միլիոն եւ 941,4 միլիոն դոլար:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ԿՈՆԿՐԵՏ ՄԵՆԱՆԻՉՄՆԵՐ՝ ԱՉԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎԹԵՆ ԱՉԳԱՆՈՒՆ ԸՆՈՐՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նոյեմբերի 8-ին Վրաստանի խորհրդարանի բյուրոյի նիստում ներկայացվեցին փոփոխություններ, որոնք նախատեսում են էթնիկ փոքրամասնությունների համար ստեղծել ավթնոտ (իսկական, իրական) ազգանուն տալու կոմկոմի մեխանիզմ:

«Վրաստանում բնակվող որոշ էթնիկ խմբերի ներկայացուցիչների ազգանունները ստեղծվել են արհեստականորեն՝ նույն էթնիկ խմբի պատմամշակութային ավանդույթներին ոչ բնորոշ մեթոդով: Վրաստանում ազգանվան փոփոխության այս պրակտիկան սկիզբ է առել Ռուսական կայսրության ժամանակաշրջանից: Այս գործընթացը հատկապես սրվեց խորհրդային տարիներին, երբ ուժացման քաղաքականության միջոցով բռնի կերպով փոխվեցին մի շարք էթնիկ խմբերին բնորոշ ազգանունները, ինչը թելադրված էր ռուսաց լեզվի գերակայությամբ: Այս գործընթացը միայն Վրաստանում չի եղել: Օրինակ՝ խորհրդային Միությունից

հետո ադրբեջանական ազգանունների վերջավորությունները ձեռք են բերել ռուսական ազգանունին բնորոշ վերջավորություններ: Հայտնի է, որ նմանատիպ մոտեցում կիրառվել է Վրաստանում եւ խորհրդային Միության այլ երկրներում ապրող այլ էթնիկ խմբերում (եզդիներ, հույներ): Եղել են դեպքեր, երբ ազգանունը չի փոփոխվել, այլ ամբողջովին արհեստականորեն ձեւավորվել է վերագրվել է էթնիկ փոքրամասնությունները գրկվել են իրենց ինքնությունը բնորոշ ազգանուն կրելու իրավունքից, իսկ մշակութային անհիմն գերիշխանության այս մեթոդի կիրառմամբ՝ այդ անձինքը գրկվել են սեփական ազգանուններ ու-

նենալու հնարավորությունից»,- ասված է օրինագծում: Փոփոխություններով կատեղծվի ժամանակավոր հանձնաժողով, որը իրավասու կլինի ուսումնասիրել եւ արդարադատության նախարարին ներկայացնել ազգությունների ցուցակ, որոնց նկատմամբ տեղի է ունեցել ոչ ավթնոտ ազգանուններ տալու պրակտիկա: Հանձնաժողովը նաեւ իրավասու կլինի մշակել եւ նախարարին ներկայացնել ազգանունների փոփոխության մեթոդաբանություն՝ որպես առաջարկություն: Ինչպես նաեւ, օրենքի նախագծի հիման վրա արդարադատության նախարարին իրավասու է հրաման արձակել ազգանվան փոփոխության եւ դրա հետ կապված հարցերը կարգավորելու ընթացակարգերի վերաբերյալ: Նույն հրամանով սահմանվում է նաեւ ազգանվան փոփոխության կարգի հետ կապված ծառայությունների վճարը:

ՊԵՏՐՈՒԶԵ - 2022

# ՆԵՐԿԱՅԱՅՎԵՅ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ



**Նոյեմբերի 8-ին Վրաստանի ֆինանսների նախարար Լաշա Խուցիշվիլին ներկայացրեց 2022 թվականի պետական բյուջեի վերանայված նախագիծը:**

որ է, որ Համախառն ներքին արտադրանքի (ՀՆԱ) ծավալը մինչև 2022 թվականը կազմում է 65,0 մլրդ լարի, ինչը նշանակում է 2022 թվականին մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի հաշվարկը 5500 ԱՄՆ դոլարի չափով, հայտարարեց ֆինանսների նախարարը եւ հավելեց, որ այս փոփոխությունները հանգեցրել են հարկային եկամուտների ավելացման:

Պարզաբանելով ներկայացված փաստաթուղթը՝ ֆինանսների նախարարը հայտարարեց, որ սեպտեմբերին գրանցվել է 6,9 տոկոս տնտեսական աճ: Երեք եռամսյակի տվյալներով, նախորդ տարվա համեմատ, Վրաստանի տնտեսությունը աճել է 11,3 տոկոսով: Այս ցուցանիշի հիման վրա վերանայվել է 2021 թվականի տնտեսական աճի իրական կանխատեսումը եւ բյուջեի լրանված տարբերակը, 9,5 տոկոսի փոխարեն, սահմանվել է 10,0 տոկոս:

Հարկային եկամուտները, նախորդ տարբերակի համեմատ, աճել են 218 մլրդ լարիով, իսկ ՀՆԱ-ի նկատմամբ հարկային մուտքերը մնում են 23,7 տոկոս: Հատկանշական է նաեւ, որ պահպանվում է ՀՆԱ-ի նկատմամբ կապիտալ ծախսերի բարձր ծավալը: Ինչպես գիտեք, 2021 թվականին այն կազմել է 8,2 տոկոս, մինչդեռ 2022 թվականին այն կկազմի 8,6 տոկոս: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները, նախորդ տարբերակի համեմատ, ավելացել են 342,5 մլրդ լարիով եւ կազմել 19 026,4 մլրդ լարի, ծախսերի գծով նախատեսված է 18 839,0 մլրդ լարի, որը, առաջին տարբերակի համեմատ, ավելի քան 395,7 մլրդ լարի է, նշեց Լաշա Խուցիշվիլին:

Ինչ վերաբերում է առանձին ուղղությունների ֆինանսավորման թեմային, ապա ֆինանսների նախարարի խոսքով, մի քանի նոր ծրագրերի համար 2022 թվականի բյուջեի վերանայված տարբերակում լրացուցիչ միջոցներ են հատկացվել առողջապահության ուղղությամբ:

- 2022 թվականի բյուջեի վերանայված տարբերակում 75,4 միլիոն լարիով ավելացվել են բռնագավառի տարածքներից ներքին տեղահանվածների, աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական հարցերի նախարարության հատկացումները, նշեց նախարարն ու հավելեց, որ լրացուցիչ միջոցներ են հատկացվել մի քանի նոր առողջապահական ծրագրերի համար:

- Ծանր սահմանափակ կարողություններով անձանց եւ մինչեւ 18 տարեկան սահմանափակ կարողություններով երեխաների ամսական սոցիալական նպաստը կավելանա 25 լարիով, պատերազմի վետերանների դրամական նպաստը 22 լարիից կդառնա 100 լարի, միջոցներ են տրամադրվել աշխատավարձերի աստիճանական համահարթեցման համար, քաղաքացիներին շտապօգնության բրիգադների աշխատավարձերը թերխիսիում: Հաջորդ տարվա բյուջեով նախատեսվում է ֆինանսավորում առողջապահական նոր ծրագրերի համար, այդ թվում՝ ողնաշարի ատրոֆիա ունեցող երեխաների համար նորագույն սարքավորումների ձեռքբերում, ինչպես նաեւ լյարդի եւ ոսկրածուծի փոխպատվաստում ավիահատուկությունների համաֆինանսավորում:

- Ավելացվել է ուղղորդման ծառայությունների, երեխաների խնամքի ծրագրերի ֆինանսավորումը, ինչպես նաեւ սոցիալական աշխատողների եւ հոգեբանների վարձատրությունը, - ասաց ֆինանսների նախարարը:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

# ԻՆՉՊԵՍ ԵՆ ԳՈՐԾԵԼՈՒ 200 ԼԱՐԻ Ի ԶՎԵԼԱԿՆԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

**Ինչպես արդեն հաղորդել ենք, կորոնավիրուսի դեմ պատվաստումների խրախուսման նպատակով կառավարությունը որոշում ընդունեց մինչև 2022 թվականի հունվարի 1-ը պատվաստված կենսաթոշակառուներին 200 լարի հավելավճար տրամադրելու մասին:**



Ծրագրի մանրամասների պարզաբանման նպատակով, մենք դիմեցինք Սոցիալական ծառայությունների գործակալության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լեւան Գոգոձեին:

Եվս մեկ հանգամանք. քանի որ Վրաստանում տղամարդկանց կենսաթոշակային տարիքը սկսվում է 65-ից, այն քաղաքացիները, ովքեր 60-65 տարեկան են եւ թոշակառու չեն, չունեն բանկային հաշիվ, սոցիալական ծառայության գործակալությունը անվճար հաշվեհամար կբացի Լիբերթի բանկի հետ համաձայնագրի շրջանակներում: Հաշիվը կբացվի բազմաթիվ ստանալուց հետո, հինգ օրվա ընթացքում, եւ այդ անձինք գումարը կստանան այս հինգ օրվա ընթացքում:

- Միանգամից ասեմ, որ 60-ն անց քաղաքացիներին 200 լարի հավելավճարի ծրագիրն արդեն ուժի մեջ է: Հետեւաբար, այս տարիքային խմբի մարդիկ, ովքեր առաջին անգամ կպատվաստվեն ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ, կկարողանան ստանալ այս գումարը:

Գումարը ստանալու մեխանիզմը հետեւյալն է. Տեղեկատվական տեխնոլոգիաների գործակալությունը Սոցիալական ծառայության գործակալությանը յուրաքանչյուր ամսվա 1-ին եւ 15-ին կտրամադրի պատվաստումների բազան: Գործակալությունն այդ օրվանից 5 օրվա ընթացքում կկատարի 200 լարի փոխանցումը: Գումարը փոխանցվելու է քաղաքացիների կենսաթոշակային հաշվին:

Գումարը ստանալու մեխանիզմը հետեւյալն է. Տեղեկատվական տեխնոլոգիաների գործակալությունը Սոցիալական ծառայության գործակալությանը յուրաքանչյուր ամսվա 1-ին եւ 15-ին կտրամադրի պատվաստումների բազան: Գործակալությունն այդ օրվանից 5 օրվա ընթացքում կկատարի 200 լարի փոխանցումը: Գումարը փոխանցվելու է քաղաքացիների կենսաթոշակային հաշվին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ԳԱԶԻ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՄՊԱՌՄԱՆ ՍԱԿԱԳԻՆԸ ՄՈՒԻՄ Է ԱՆՓՈՓՈՒՄ, ԹԵՎ ՈՉ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՄՊԱՌՄԱՆ ՍԱԿԱԳԻՆՆ ԱՎԵԼԱՆՈՒՄ Է

**Վրաստանի էներգետիկայի եւ ջրամատակարարման կարգավորման ազգային հանձնաժողովը (ՍԵՆԵԿ) պարզաբանում է, որ քաղաքացիների համար բնական գազի սպառման սակագինը չի բարձրանա: Ինչպես թբիլիսիում՝ «Թբիլիսի էներջի» կենցաղային սպառողների համար, այնպես էլ՝ մարզերում՝ «Սոկար Զորջիա գազի», «Սաքորգ գազի» եւ «Ինտեր Գազի» կենցաղային սպառողների սակագները հաստատված են մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:**

Նոյեմբերի 1-ից «Սոկար Զորջիա գազի» եւ «Ինտեր Գազի» կողմից սակագնի փոփոխությունը, ըստ ՍԵՆԵԿ-ի, տարածվում է միայն ոչ կենցաղային բաժանորդների վրա՝ նշելով, որ ՍԵՆԵԿ-ը չի սահմանում բնական գազի մատակարարման/սպառման սակագներ այս կատեգորիայի բաժանորդների համար:

Իսկ ինչ վերաբերում է ոչ կենցաղային սակագնի փոփոխությանը, ապա «Ինտեր Գազ» ՍՊԸ-ի տեղեկատվությամբ, Վրաստանի մարզերում գազի սակագինը 6-ից կդառնա 20 թեթրի: 2021 թվականի դեկտեմբերի 1-ից ոչ կենցաղային սպառման բնական գազի 1 խորանարդ մետրը կկազմի 1,15 լարի:

Դեկտեմբերի 1-ից գազի սակագինը կբարձրացնեն նաեւ SOCAR Georgia Gas Ltd-ն եւ Telavi Gas-ը: Այստեղ նույնպես սակագնի փոփոխությունը վերաբերում է մանրածախ, ոչ կենցաղային օգտագործմանը եւ բնական գազի 1 խորանարդ մետրի գինը եւս կսահմանվի 1,15 լարի՝ ներառյալ ԱՄՅ-ն:

Հիշեցնենք, որ արդեն գրեթե մեկ տարի է, ինչ թբիլիսիում բարձրացվել է գազի սակագինը ոչ ֆիզիկական անձանց համար: Tbilisi Energy-ի բաժանորդները 1 խորանարդ մետր բնական գազի համար վճարում են 1,10 լարի, իսկ նախկինում գործող սակագինը կազմում էր 0,86 լարի:

Հիշեցնենք, որ արդեն գրեթե մեկ տարի է, ինչ թբիլիսիում բարձրացվել է գազի սակագինը ոչ ֆիզիկական անձանց համար: Tbilisi Energy-ի բաժանորդները 1 խորանարդ մետր բնական գազի համար վճարում են 1,10 լարի, իսկ նախկինում գործող սակագինը կազմում էր 0,86 լարի:

# ԱՎԵԿԱԼՈՒՄ ԵՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՍԱԿԱԳՆԻ ՆՎԱՋԵՅՄԱՆ ՀԱՐՉՈՒՄ

**Համաշխարհային շուկայում վերջին ժամանակներս վավերացվել է նավթամթերքի նշանակալից աճ: Նոյեմբերի 8-ի տվյալներով, Համաշխարհային շուկայում մեկ տոննա բենզինի գինը կազմում էր 810,25, իսկ դիզելային վառելանյութի մեկ տոննան՝ 716,25 դոլար:**

Համաշխարհային շուկայում նավթամթերքի կտրուկ աճն իր ազդեցությունը գործեց Վրաստանում նավթամթերքների սակագների վրա: Արդեն բավական ժամանակ է, ինչ Վրաստանի բենզալցակայաններում մեկ լիտր վառելանյութի արժեքը հասել է 3 լարիի շեմը: Նավթամթերք ներկրողների համոզմամբ, վառելանյութի սակագնի նվազեցման միակ գործոնն ակցիզային հարկի նվազեցումն է, որը 2017 թվականի կառավարության կողմից ընդունված որոշմամբ, կրկնապատկվեց (բենզինի ակցիզը 250 լարիից հասցվեց 500-ի, իսկ դիզելային վառելանյութինը՝ 150-ից՝ 400 լարիի):

Կառավարության նման քայլը մեծ նշանակություն կունենա, թեեւ ակնհայտ է, որ ակցիզային հարկի ստացումը պետք է համալրման նշանակալի աղբյուրն է: Թեեւ նման պարագայում հարկավոր է հաշվի առնել ոչ պակաս մի հանգամանք՝ երկրի տնտեսական իրավիճակը, որի հաշվառումը շատ ավելի նշանակալից է, - «Վրաստանի» հետ գրույցում հայտարարեց «Սենտա պետրոլիում Զորջիայի» ղեկավար Ջալալ Իսկրեթեին:

Նավթամթերքի բարձր գների նվազեցման ուղղությունը, միակ հնարավորությունը, ըստ «Վիտլ պետրոլիումի» գլխավոր տնօրեն Վասիլ Խորավայի, ակցիզային հարկի նվազեցումն է:

- Այսօր նավթամթերքի սակագինը հասել է կրիտիկական շեմին: Դրա նվազեցման միակ ուղին ակցիզային հարկի նվազեցումն է: 2017 թվականին բենզինի ակցիզը կրկնապատկվեց, առավել նշանակալից էր դիզելային վառելանյութի ակցիզի փոփոխումը՝ այն 150-ից հասցվեց 400 լարիի: Եթե կառավարությունը համաձայնի ակցիզային հարկի նվազեցմանը, ապա դա հնարավորություն է ստանալու վառելանյութի համաշխարհային շուկա-

վորություն կտա առնվազն 25 թեթրիով նվազեցնել բենզինի եւ դիզելային վառելանյութի սակագինը:

Եթե հաշվարքի համար վերցնենք վերջին մեկուկեսամսյա ժամանակահատվածը, ապա ակնհայտ է՝ ունենք կայուն լարի, թեեւ սարսափելի անկայունություն է հաստատվել վառելանյութի համաշխարհային շուկա-

յում: Մեկ տոննա վառելանյութի արժեքն ավելացել է 100 դոլարով, եթե դա հաշվարկենք լիտրերով, ապա նախորդ գնի համեմատ, ներկայիս սակագինն ավելանում է 25-30 թեթրիով: Այսինքն, միայն համաշխարհային գնի ավելացման քաղաղորդիչով, նախորդի համեմատ, ներկայիս սակագնի տարբերությունը կազմում է 25 թեթրի: Եթե վերցնենք մեր ընկերության օրինակը, ապա հոկտեմբերի երկրորդ կեսի համեմատ, մեր բենզալցման կայաններում սակագինն ավելացել է ընդամենը 10 թեթրիով:

Ակցիզային հարկի դրույթի փոփոխմամբ, հնարավոր կլինի ազդեցություն գործել սակագնի վրա: Կան մշակված մոդելներ, երբ նավթամթերքի գների ավելացման ժամանակահատվածում ակցիզի գումարը նվազեցվում է, եւ նավթամթերքի համաշխարհային գների նվազեցման դեպքում, ավելացվում է: Դա, բնականաբար, որոշելու է կառավարությունը: Ցավոք, այդ հարցով խորհրդատվություններ չեն անցկացվում, իսկ բիզնեսը միակողմանի նման որոշում ընդունել չի կարող, - հայտարարեց Վասիլի Խորավային: